

ՄԵՐ
ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐՈՒՆ

Վարդանանց Տօնին
առիթով, «Այդակ» լոյս
չի տեսներ վաղը՝
Ուրբաթ, 3 Մարտին:
Մեր յաջորդ թիւը՝
Շաբաթ, 4 Մարտին:

ԱԶՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԳԵՂՈՐԶԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدة يومية سياسية وأدبية - الديرة المسؤولة، إيشادرويشيان

1500 L.Ռ. 72ԹՎ ՏԱՐԻ, ԹԻԻԵ 299 (20462) ՀԻՆԳԸԱԲԹԻ, 2 ՄԱՐՏ 200010 ԷԶ

ՍԵՌԻՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ
ԳԱՅԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԸ
ԱՅՍՕՐ ԿԸ ԺԱՄԱՆԷ ՊԵՅՐՈՒԹ

Նախագահական պալատի ընդհանուր տնօրէնութեան փորձըքլային հարցերու վարչութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ Մեհտական Արաբիոյ գահաժառանգ իշխան՝ Ապտալա Պըն Ապտէլ Աբիլ, այսօր Հինգշաբթի, 2 Մարտին բարձրաստիճան պատճառակութեան մը ընկերակցութեամբ պաշտօնական այցելութեան մը համար կը ժամանէ Պէյրութ:

Հաղորդագրութիւնը ըսաւ, որ գահաժառանգ իշխանին պաշտօնական ընդունելութիւն պիտի կատարուի Պաապտալի պալատին մէջ:

ԽՄԱԿԳՐԱԿԱՆ

ԳԱՂԱՓԱՐԸ՝
ՄԻԱԿ ՈՒՂԻՆ

Կը դեղեւինք գահալէժ վիճի եղբիւն ու կը տառնինք անվճռական. շփոթահար կը հետեւինք խաբուսիկ երեւոյթներու եւ կ'երկրպագենք սին կուրքերու: Մինչդեռ, հայ ազգի հոգեմտաւոր գանձատունը կը լորդի վեհագոյն արժէքներով եւ կը ճառագայթէ տարերային հզօրութեամբ. ան հարուստ է մանաւանդ Վարդանանց ազգային սրբութեամբ:

Յանախ կ'ըսենք թէ՝ սուր կարիքը ունինք հաւաքելու եւ ներգործօն աշխատանքի, կը դժգոհինք անտարբերութեան համատարած երեւոյթէն եւ կը հաստատենք թէ՝ ազգն ու հայրենիքը կը գտնուին գոյութեանկան հարցականներու, կենսական նշանակութիւն ունեցող մարտահրաւերներու դիմաց: Մեր, հայրենական թէ սփիւղեան խնդիրները կը բաղմանան, կը բարդուին եւ կ'ահագնանան, իսկ ժամանակը մեր դէմ կ'ընթանայ:

Անհրաժեշտ է զգաստանալ եւ երթալ դէպի ազգին կորուլին եւ ուժին աղբիւրները՝ դէպի գաղափարական հանգանակ. ոյետք է վերադառնալ Աւաքայր՝ վերստին հաղորդուիլ Վարդանանց հաւատամքով եւ յատգամով ի խնդիր հայ ազգի գոյապայքարին վերաշխուժացումին եւ յառաջիադացին:

Վարդանանց յատգամեցին թէ կենքի իմաստը կը գտնուի կենքի գիտակից արժեւորումին, այսինքն՝ գաղափարի ծառայութեան մէջ:

«Մահ իմացեալ անմահութիւն է»։ միտքը շարունակելով կարելի է հաստատել թէ՝ իսկական հարստութեան աղբիւրը զոհաբերութեան մէջ է, անանձնական ծառայութիւնն է հիմը հոգեպարար լիութեան, ազգասիրութիւնը համագօր է մարդկութեան նկատմամբ սիրոյ եւ ընկերասիրութիւնը ինքնավստահութեան արմատն է։ Այո՞. երջանկութիւնը ոյետք է փնտռել գաղափարին բարոյական գործելածեւով իրագործումին մէջ։

Այսօր, Հայաստանը կը տույտի տնտեսական եւ ընկերային սուր տագնապներու մէջ, որոնց իբրեւ հետեւանք մէկ կողմէ հայրենիքը կը պարպուի հայութենէ՝ իսկ միւս կողմէ երկիրը եւ ոյետութիւնը կը դառնան խոցելի. միջազգային եւ շրջանային տարբեր շահեր եւ ուժեր այսօր կը փորձեն ծուկնի բերել իր անկախութիւնը վերագտած եւ Արցախի հայապատկան հողերը հաւաքական ճիգով ազատագրած հայ ժողովուրդը. բանակցութիւններու ճամբով իլլելու համար այն հզօր լծակը, որ ձեռք բերուեցաւ բազում զոհողութեամբ եւ ծով արեամբ։

Միւս կողմէ, անգաղափար եւ զծուձ հայեր, անհատ թէ իմբակցութիւն, մղուած՝ սեփական շահերէ, կը կողոպտեն ոյետութիւն եւ ժողովուրդը, կը շահագործեն օրէնք եւ ազգային արժէք, դիզելու համար անլուր հարստութիւն, խորացնելով ունեւորին եւ աղքատին միջեւ վիճը եւ սոլառնալով Հայաստանի տնտեսական - ընկերային կառուցութեան. այսոյեւ եւս խոցելի կը դառնայ երկրի քաղաքական ուժը, եւ հետեւաբար կը վտանգուի արցախեան ձեռքբերումը։

Արտերկրի մէջ մաշումի եւ ձուլումի ենթակայ գաղթօճախները կը դիմագրաւեն եռակի մարտահրաւերներ։ Ազգային քաղաքականութեան օճախի դերը վերստանձնած հայրենիքը տակաւին ի վեհակի չէ առաջնորդելու սփիւղեան կեանքը, տնտեսական տագնապները աւելի ու աւելի կը ճնշեն հայապահպանումի եւ Հայաստանի հզօրացումի զոյգ պարտականութիւնները ուսերուն վերցուցած սփիւռքահայութեան վրայ, իսկ կարգ մը գաղութներու պարագային տեղական աննպաստ պայմանները ոչ միայն կը դժուարացնեն ազգային գործը, այլեւ կը սոլառնան տուեալ գաղութներուն կազմակերպութեան եւ ազգային կառոյցներուն։

Այս իմաստով, ամենալուրջ դժուարութեան դէմ լանդիման կը գտնուի յատկապէս լիբանանահայութիւնը. ան իր անցեալի հարստութեամբ եւ ներկայի կարեւորութիւններով կը շարունակէ ըլլալ հզօր կարողականութիւն ունեցող շրջան, որ այսօր վտանգուած է տնտեսական ու կազմակերպական, բայց մանաւանդ գաղափարական տագնապներու պատճառով։

Այո՞. գաղափարական տագնապ, որովհետեւ օր մը, տեղ մը, փրթաւ կալը մեր եւ Վարդանանցի, մեր եւ Արամ Մանուկեանի, մեր եւ Թեմիլիբեանի, մեր եւ Լիզյոնի հինգին միջեւ։

Ընդունելով հանդերձ, որ տնտեսական ճնշումները ունին մեծ դերակատարութիւն. հաստատելով նաեւ, որ ազգային, հասարակական մեր կեանքը եւ կառոյցները ոյետք է ենթարկել վերակառուցման, պարտաւոր ենք ընդունիլ նաեւ, որ մենք հեռացած ենք կենսատու աղբիւրէն՝ գաղափարէն եւ համապատասխան՝ բարոյական գործելածեւէն։

Ընդունինք, որ մեծ է վիճը մեր եւ Վարդանանցի միջեւ, բայց նաեւ գիտակցինք որ գաղափարական ճիգէն դուրս չկայ փրկութեան ճանապարհ, Հայրենիքի թէ Սփիւռքի տագնապող հայութեան համար։

Վերադաժ դէպի Աւարայր. վերարժեւորում Վարդանանց հաւատքին եւ գործին՝ վերընձիւղում սրբութեամբ։

ՄԻՆՉ ՍՈՒՐԻԱ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ԿՈԼԱՆԻ
ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՐԴՈՒՄԻ ԻՐ ՊԱՀԱՆՋԸ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽՈՐԷՐԴԱՐԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ
ԿԸ ՍՏԵՂԾԷ ԿՈԼԱՆԻ ՊԱՐԴՈՒՄԻՆ
ՇԱՍԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՇԱՆՐԱՔՈՒԷԻ ԴՆԵԼՈՒ
ՊԱՐԱՔԻ ԾՐԱԳԻՐԻՆ ԴԻՄԱՅ

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաք երկէ պարտութեան մատնուեցաւ խորհրդարանին մէջ, այնպիսի պահու մը, երբ ան պէտք ունի յաւելեալ զօրակցութիւն ապահովելու իր կառավարութեան եւ պիտի պահու մը, երբ ան քուէարկութեան արդիւնքը կը հարուածէ Պարաքի վարկն ու կառավարութեան հանդէպ որդեգրած քաղաքականութեան։

Ընդդիմադիր ճակատին կողմէ ներկայացուած օրինագիծի մը առաջարկով վաւերացուեցաւ 53ի դէմ 60 քուէներով։ Թէեւ օրինա-

գիծը օրէնքի վերածուելու համար տակաւին քանի մը փուլէ եւ քանի մը քուէարկութենէ պիտի անցնի, բայցեւայնպէս առաջին քուէարկութեան արդիւնքը կը հարուածէ Պարաքի վարկն ու կառավարութեան հանդէպ որդեգրած քաղաքականութիւնը՝ նկատի ունենալով, որ դէպի թեքող կարգ մը ընկերակիցներ ինպաստ ընդդիմադիրներուն քուէարկեցին։ Վարչապետ դառնալէ ի վեր, Պարաք առաջին անգամ ըլլալով այս-

պիտի տագնապ մը կը դիմագրաւէ։

Վաւերացուած օրինագիծի առաջարկը կը պահանջէ, որ Սուրիոյ Հետ խաղաղութիւն հաստատելու եւ Կոլանէն Հեռանալու հանրաքուէին պէտքէ նկատի ունենալ ոչ թէ քուէարկութեան մասնակցողներուն մեծամասնութիւնը, այլ՝ ընտրական պաշտօնական անունանցանկերուն վրայ արձանագրուած քուէարկողներուն 50 առ հարիւրը։ Պարաք որոշած է հանրաքուէի դնել Կոլանը պարպելու ծրագիրը, երբ Սուրիոյ Հետ խաղաղութեան համաձայնագիր ստորագրէ։ Առաջարկուած օրինագիծին համաձայն, «այո» քուէարկողները պէտք է կազմեն ցանկերուն վրայ գտնուող թիւին յիսուն առ հարիւրը։ Այն ման մը, որ բաւական դրժւար ու անիրագործելի կը նկատուի։

Պարաք փորձեց մեծ կարեւորութիւն չընծայել քուէարկութեան արդիւնքին։ Ան դիտել տուաւ, որ այս արդիւնքը վերջնական չի դարձներ օրինագիծը, որ

տակաւին քանի մը քուէարկութենէ պիտի անցնի։ Պարաք չեղտեց, որ խորհրդարանին կողմէ որեւէ «խաղ» պիտի չկարենայ արգիլել, որ հանրաքուէի մը մասնակցող քուէարկողներուն մեծամասնութիւնը որոշէ երկրին ապագան։

Արդարութեան նախաբար Եոսի Պէլլին խիստ

Շաբ. ր.՝ էջ 10

ՏԵՄԻՐԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԹՐԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ
ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԿԸ ՆԿԱՏԷ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Թուրքիոյ նախագահ Սիւլէյման Տեմիրէլ յայտնեց, որ Կովկասի մէջ խաղաղութեան հաստատումը կարեալ է Հեռնային Ղարաբաղի տագնապին լուծումէն։

Իզդիր նահանգէն պատւիրակութեան մը հետ իր հանդիպումին ընթացքին, Տեմիրէլ ըսաւ, որ եթէ Կովկասի մէջ խաղաղութիւն ըլլայ, Իզդիրը կրնայ աւելի դուրին բարգաւաճի։ Այլ խնդրանքներու կարգին, պատուիրակութիւնը նախագահէն պահանջեց, որ եթէ հայ-թրքական յարաբերութիւնները բարելաւին, Իզդիրէն դէպի Հայաստան հասնանք վերաբացուի։

Տեմիրէլ յայտնեց, որ առաջին հերթին պէտք է գաղթականները վերադառնան, ապա խաղաղութեան բանակցութիւնները կրնան սկսիլ։ Ան ըսաւ, որ Ազրպէյճան մեզմէ գատուրիչ քարեկամ չունի, հետեւաբար մենք պէտք չէ դիմենք քայլերու, որոնք կրնան նեղ կացութեան մատնել Ազրպէյճանը։ Մենք հայերուն ըսած ենք, որ երբ սկզբունքային համաձայնութեան մը հասնին

Ազրպէյճանի հետ, ապա մենք մեր ղոները կը բանանք», ըսաւ Թուրքիոյ նախագահը։ Տեմիրէլ նկատել կարեալ է Հեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը, ապա Կեդրոնական Ասիա հասնիլը աւելի դուրին պիտի ըլլայ։ Ան

(ԱՆԱՏՈՒԻԱ)

ԿՈՉ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 2 Մարտ 2000ին, հայ ժողովուրդը աշխարհով մէկ կը տօնախմբէ Վարդանանց Հերոսամարտի յիշատակը։

Վարդանանց Հերոսամարտը անցեալէն եկած յիշատակ մը չէ սոսկ, այլ մեր ամեցօրեայ կեանք ոգեւորողը եւ մեր գոյամարտը առաջնորդող պատգամ է։

Լիբանանի մէջ հայ համայնքը յատկանշող տօներէն մէկն է Վարդանանց տօնը։ Հայութեան մասնակցութիւնը այս տօնին ցուցանիշ է հայ համայնքի կենսունակութեան եւ ազգային արժէքներու պահպանութեան։

Այս համոզումով, կոչ կ'ուղղենք Լիբանանի հայութեան, Հինգշաբթի, 2 Մարտին փակել խառնուրդը, գործատեղիները ու գրասենյակները եւ իտուներամ բազմութեամբ մասնակցիլ Վարդանանց Տօնին առիթով մատուցուելիք Սուրբ պատարագի արարողութեանց եւ կազմակերպուած հանդիպումներին։

Անձնական օրինակով, հաւաքական կարգապահութեամբ եւ նախանձախնդրութեամբ սերունդներու մէջ վառ պահենք Վարդանանց հերոսամարտի հաւատքն ու ոգին։

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՋԵՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԿ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ՆԵՐՍԷՍ - ՊԵՏՐՈՍ
ԺԹ. ԹԱՐՄՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐԹԸ
ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ներսէս - Պետրոս ԺԺ. Թարմունի պատրիարք Կաթողիկէ Հայոց, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղը. Տ. Գեղամ եպս. Խաչերեանի, Ազգային առաջնորդարանին մէջ, Պուրճ Համուտ։ Հոգեւոր տիրոջ կ'ընկերանար Գերապայժառ Վարդան եպս. Աշգարեան։ Հանդիպումին ներկայ եղաւ առաջնորդարանի դիւանապետ դոկտ. Ժան Սամանեան։

Այցելութեան ընթացքին հոգեւոր տէրը շնորհաւորեց առաջնորդ սրբազանը եպիսկոպոսական աստիճան ստանալու առիթով եւ հովուական յաջողութեան բարեմաղութիւնները ըրաւ։

Առաջնորդ սրբազանը իր կարգին շնորհակալութիւն յայտնեց փոխանցուած շնորհաւորութեան եւ մաղթանքներուն համար։

Յ. Յ. Դ. ՅԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԵԴՐՈՆԸ

ԱՅՍ ՏԱՐԻ ԵՒՍ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ
ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ
19ԹԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Կազմակերպութեամբ
ԱՆԹԵԼԻԱՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՇԱՐԺՈՒՄԻՆ

Հովանաւորութեամբ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ

Բացումը տեղի պիտի ունենայ այսօր՝ Հինգշաբթի, 2 Մարտ 2000, երեկոյեան ժամը 5:00ին, Մար Էլլասի եկեղեցիին սրահէն ներս, Անթիլիաւ։

●Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ Կիրակի. 12 Մարտ 2000. առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 9:00:

ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ
ՔՈՒԷԱՐԿՈՂՆԵՐՈՒ
ՈՒ ՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Կեդրոնական Ընտրական Մարմինն իր տրամադրութեան տակ ունի Լեռնալիբանանի Հայ Համայնքին ընտրական լիւի ցանկը։

Կարելիութիւնը կայ մինչեւ 10 Մարտ 2000, սիւլ արձանագրուած կամ ցանկի վրայ չգտնուող անուններու գծով սրբագրութիւն պահանջել։

Բոլոր անունը. որոնք կ'ուզեն իրենց անուններուն անմիջական ստուգումը կատարել կրնան հեռաձայնել Երեւանեան կեդրոն, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00 հետեւեալ թիւերով. -

01 / 240169 - 70
01 / 240171 - 72

ՄԱՆՍԺ. - Յառաջիկայ օրերուն պիտի կատարուի Պէյրութի ընտրական ցանկերու ստուգումը։

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐԱՖԱՐ ՊՈՅԵՐԹ ՊԻՏԻ ԵՆԹԱՐԿԵ
ՕՏԱՐ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՔ
ԿԸ ՄԵՐԺԵՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ՀԵՏ
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԷՋ

ԵՐՈՒՍԱՂԵՍ. 1 (ՌՈՅԹԸՐԶ).- Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ *պոյթոթի* պիտի ենթարկէ բարձրաստիճան բոլոր օտար պաշտօնատարները, որոնք կը մերժեն պաղեստինցի պաշտօնատարներու հետ տեսակցութիւն ունենալ Արեւելեան Երուսաղէմի մէջ. յայտնեց ՊԱԿի մէկ պատասխանատուն Չորեքշաբթի օր:

Յայտալ Հիւսէյնի ըսաւ, որ Արաֆատ այս քաղաքականութիւնը կ'որդեգրէ, իբրեւ հակադարձութիւն իսրայէլեան այն ճիգերուն, որոնք կը փորձեն ազդեցութիւն բանեցնել օտար այցելուներու վրայ. որպէսզի ՊԱԿի պաշտօնատարներու հետ Երուսաղէմի մէջ հանդիպում չունենան: Պաղեստինցիները իրենց ինչպէսզէն ապագայ անկախ պետութեան մայրաքաղաքը կը նկատեն Երուսաղէմը: Հիւսէյնի շեշտեց, որ Արաֆատ եւ պաղեստինեան իշխանութիւնը որոշած են չընդունիլ որեւէ պատուիրակ կամ դիւանագետ, որ կ'ենթարկուի իսրայէլի ճնշումներուն եւ կը շրջանցէ Արեւելեան Երուսաղէմն ու ՊԱԿի կեդրոնատեղին:

ՖՐԱՆՍԱ

ՌՈԼԱՆ ՏԻԻՄԱ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՊԻՏԻ ԵՆԹԱՐԿՈՒԻ

ՓԱՐԻԶ, 1 (ՌՈՅԹԸՐԶ).- Ֆրանսայի արտաքին գործոց նախկին նախարար Ռոլան Տիւմա, որ զատաւարութեան պիտի ենթարկուի կաշառակերութեան ամբաստանութիւններու համար, Չորեքշաբթի օր յայտարարեց, որ հրաժարած է իր պաշտօնէն, որ Ֆրանսայի դատական գերագոյն իշխանութիւնը կը ներկայացնէ:

Տիւմա (77 տարեկան) յայտնեց, որ հրաժարականը յանձնած է Երկուշաբթի օր: Ան աւելցուց, որ կը հրաժարի նաեւ Սահմանադրական խորհուրդի իր աթոռէն: «Ամէն ինչէ կը հրաժարիմ», ըսաւ Տիւմա, որ նախկին նախագահ Ֆրանսուա Միթերանի մտերիմ բարեկամներէն մէկն էր:

Տիւմա, որ մէկ տարի է վեր կը պայքարէր չհրաժարելու համար, անցեալ շաբաթ գորաւոր ճնշումներու ենթարկուեցաւ, որպէսզի հրաժարի, որովհետեւ գալթակողութեան գծով քննութիւն բացած քննիչ դատախազը որոշեց դատաւարութեան ենթարկել Տիւման եւ անոր նախկին հոմանունին՝ կաշառակերութեան յանցանքի համար:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԷՋ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈԻԼԸ
ԱՒԱՐՏԱԾ Է ԵՒ ՇՐՋԱՆԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՅԱՆՉՆՈՒԻ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՈՒՍՈՒՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

ԱԹՈՒՐԻ, 1 (ՌՈՅԹԸՐԶ).- Ռուսիոյ ներքին գործոց նախարար Վլատիմիր Ռուշայլո Չորեքշաբթի օր յայտարարեց, որ ռուսականութիւնը պատրաստ է բանակը փոխարինելու Չեչենիոյ մէջ, ուր ռուսական ուժերը նոր յաղթանակ մը ապահոված են հին պատերազմէն: Ռուշայլո կը խօսէր նախագահի պաշտօնակատար Վլատիմիր Փութինի հետ տեսակցութեան մը աւարտին: Փութին Ռուշայլոն հանդիպումի մը հրաւիրած էր՝ լսելու համար անոր վեկուցումը Չեչենիոյ մասին: Ռուշայլո ըսաւ, որ Չեչենիոյ մէջ հակահարկեր չկան արշաւին պիւնորական բաժինը հասած է իր լրումին: Ան աւելցուց, որ ներկայիս կը քննարկուի Չեչենիոյ պատասխանատուութիւնը ներքին գործոց նախարարութեան յանձնելու ծրագիրը:

Ռուսական ուժերը Երկուշաբթի օր գրաւած էին չեչէն ըմբոստ ուժերուն վերջին միջնաբերդերէն մէկը՝ Շաթոյ գիւղը: Հինգ ամսուան արիւնալի կռիւներէ ետք, Մոսկուայի կառավարութիւնը կը ծրագրէ բանակը հեռացնել տագնապահար շրջանէն. ուր բնակիչները, սակայն

համոզուած չեն, որ պատերազմը վերջ գտած է Մոսկուայի յաղթանակով: Շաթոյի բնակիչները կ'ըսեն, որ լեռները ապաստանած պիսեպիները կըրնան քանի մը օրուան մէջ վերագրաւել այն շրջանները, զորս գրաւելու համար ամիսներ կոռած են ռուսական ուժերը:

Չեչենիոյ մէջ յաղթանակ մը կենսական կը նկատուի Փութինի համար, որ կը պատրաստուի Մարտ 26ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն: Ռուսական բանակի զօրավարներուն համաձայն՝ Շաթոյի գրաւումով արաւելած է պատերազմը եւ կը մնայ փոքր թաքստոցները գրաւել ու ճնշել ըմբոստ պիսեպիները: «Թաւա» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ պաշտպանութեան նախարարութիւնը մօտ օրէն պիտի սկսի Չեչենիային հեռացնելու մօտաւորապէս 60 հազար ռուս պիսուորները: «Թաւա» աւելցուց, որ ներքին գործոց նախարարութիւնը ապահովութեան ուժեր (15 հազար) պիտի ուղարկէ Չեչենիա:

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան արտաքին կապերու բարձրաստիճան պատասխանատու Ժոզեփ

ԽԱՄԵՆԻ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ
ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՆԵՐՔԻՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Իրանի գերագոյն ղեկավար ալաթոյլա Ալի Խամենէի երէկ կոչ ուղղեց վերջ տալու ներքին ճակատի վրայ արձանագրուող հակամարտութիւններուն եւ վէճերուն:

Խամենէի ըսաւ, որ ընտրութիւնները աւարտած են, հետեւաբար, պէտք է փակել էջը եւ կեդրոնական երկիրը յուլոյ կարելու հարցերու լուծման վրայ: Խամենէի շեշտը դրաւ յատկապէս՝ տնտեսութեան բարելաման ծրագիրներուն վրայ:

Խամենէի կը խօսէր այն պահուն, երբ ջախջախիչ յաղթանակ ապահոված չափաւորականներուն եւ հակամարտ պահպանողական ճակատին հետեւորդները քուէարկութեան արդիւնքները վերջապահութեան ենթարկելու ամբաստանութիւններ կ'ուղղեն իրարու: Ընտրական կեդրոնական մարմինը հաւանութիւն տուաւ Թեհրանի կարգ մը քուէատուիներու քուէահամարը վերստին կատարելու՝ ստուգելու համար արդիւնքները, Թեհրանի աւելի քան երեք հազար քուէատուիներուն հաշարը վերստին քուէահամարի պիտի ենթարկուին: Նոր քուէահամարին արդիւնքները պիտի հրապարակուին հինգ օր ետք:

ԳԵՐՄԱՆԻԱ ԻՐԱՆԻ ԿԱՄՈՒՐՁԵ ԴԵՊՈ ԱՐԵՒՈՒՏԷ

Միւս կողմէ, Թեհրանի մէջ մեծ յաղթանակ ապահոված բարեկարգական ղեկավար Մոհամէտ Ռեզա Խաթեմի (նախագահին եղբայրը) գերմանական շաքարաթերթի մը հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ Գերմանիան կրնայ դէպի Արեւմուտք Իրանի կամուրջը դառնալ: Խաթեմի նախատեսեց, որ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եոշթա Ֆիշլըրի Իրան այցելութիւնը (յառաջիկայ շաբաթ) պիտի բարելաւէ Թեհրան - Պերլին կապերը, ամրապնդելով յատկապէս՝ մշակութային եւ տնտեսական մարզերու մէջ գործակցութիւնը: (ՌՈՅԹԸՐԶ)

125 կրամ

662 L.Ո.

595 L.Ո.

300 քաշկինակ

1,523 L.Ո.

1,370 L.Ո.

4,5 քիլո

15,850 L.Ո.

14,980 L.Ո.

3,650 L.Ո.

1 քիլո

ԹԱԱՆԱՅԷԼ ԼԵՊՆԻ

2,900 L.Ո.

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL

ԳՆՈՒՄԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՇԱՍՅԷՆ

900 կրամ

11,950 L.Ո.

5,142 L.Ո.

432 կրամ

4,630 L.Ո.

3,272 L.Ո.

6 շիշ (2 լիթր)

2,945 L.Ո.

810 L.Ո.

1 քիլո քրիճ

730 L.Ո.

618 L.Ո.

80 կրամ

550 L.Ո.

ԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ ԿՈՒԹԱՄՆ

«ԱԶԳԱՅԻ» հետ կապուելու համար
հեռաձայնել հետևեալ թիւերուն. -
258526, 260115 եւ 241274:



Կարգալար

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ

ԶՈՅԳԵՐՈՒ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ընկերաբաններու եւ հոգեբաններու կարծիքով, հրաշք միջոցներ չկան զոյգերու յարատեւութեան համար, այլ կան որոշ կանոններ, որոնք կիրարկուելու պարագային կարելիոր համեմատութեամբ կ'օգնեն, որ զոյգերը գոյատեւեն հակառակ կեանքին յարուցած զանազան դժուարութիւններուն:

ՄԻՐԵՆ ԶՈՅԳԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Շատ մը զոյգեր կը բաժնուին, քանի որ համոզուած չեն զոյգի գաղափարին. անոնք կը մտածեն, որ իրենց սերը ժամանակաւոր է, եւ թէ զոյգի կեանքը ուրիշ բան չէ. եթէ ոչ բանտի տեսակ մը:



Կը յարատեւեն այն զոյգերը, որոնք սկիզբէն ընտրութիւն մը կատարած են եւ կը քանան հաւատարիմ մնալ ամուսնին: Այսպէս, թերեւս սխալած չէ այն անձը, որ ըսած է. «Կը նախընտրեմ կեանքի բազմաթիւ երեսներ ապրիլ նոյն կնոջ հետ, քան մէկ երեսը շատ մը կիններու հետ»:

ՆԵՐՈՂԱՄԻՏ ԸԼԼԱՆ

Կը պատահի, որ զոյգերէն մէկը յուսախաբ ընէ կամ դաւաճանէ միւսին: Նախքան դատապարտելու ու բաժնրելու որոշում կայացնելը, նախընտրելի է հարց տալ, թէ դիմացինը ինչո՞ւ այդ ընթացքը ունեցաւ, արդեօք ինք ալ սխալի կամ յանցանքի բաժին մը չունի՞» այդ բոլորին մէջ եւ արդեօք չարժեք ու առիթ մը տալ կողակիցին:

ՊԶՏԻԿ ՂԱՃՈՅԸ ԵՐ ՊԱՏՃԱՌԵՆ

Բազմաթիւ ձեւեր կան դիմացինին իր սերն ու ուշադրութիւնը գգալի դարձնելու: Զոյգ մը վարդ նուիրելը կամ անոր սիրած մէկ ճաշը պատրաստելը կամ առանց առիթի պզտիկ նուէր մը նուիրելը հաճելի ձեւեր են դիմացինին հասկցնելու, որ «թէւ տարիները կ'անցնին, սակայն տակաւին կը սիրեմ քեզ...»: Երբեմն հաճելի են նման յիշեցումները:



ՊԱՅԵԱՐԸ

ՄԻՈՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Միօրինակութիւնը զոյգի մը թիւ մէկ թշնամին է: Պէտք է երբեմն համեմել միօրինակ առօրեան վերջին պահուն ծրագրելու յայտագիրներով: Երեկոյեան պատկերասփիւռին առջեւ անշարժանալու փոխարէն շարժապատկերի սրահ երթալ կամ բարեկամներ հրաւիրել գաւաթ մը խմիչքի:

կամ պատկերասփիւռը մարել եւ մոմի լոյսով երաժշտութիւն մտիկ ընել... կարելիութիւնները շատ են:

ԿՈՂԱԿԻՅԸ ԸՆԴՈՒՆԻՒ ԱՅՆՊԵՄ, ԻՆՉՊԵՄՈՐԸ

Սկիզբը կողակիցը կը թուի ըլլալ աշխարհի ամենէն կատարեալ տակը. բայց քիչ-քիչ կ'անդրադառնանք, որ ան թերութիւններ ունի: Անշուշտ կ'ուզենք սրբագրել զանոնք, բայց կարելի չէ զինք մեր պատկերացուցած կաղապարին մէջ դնել, պէտք է զինք ընդունինք այնպէս, ինչպէս որ է:

ԵՐԿԻՉՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՆՐԱՓԵՇՏ

Երկխօսութիւնը շատ անհրաժեշտ է զոյգի մը գոյատեւման համար: Երկխօսութիւն ստեղծելու համար պէտք է գիտնալ դիմացինը լսել: Իսկ կարելի չէ լաւ լսել, երբ մէկ աչքով ու կաշուով պատկերասփիւռին կը հետեւինք կամ երկորդ գործով մը զբաղած ենք: Լսել, մտիկ ընել կը նշանակէ նաեւ ուշադիր հետեւիլ կողակիցին եւ անոր դէմքին արտայայտութեան իսկ հասկնալ, որ ան բան մը ունի ըսելու:



ԹՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԸ

ՄՐԳԵԼԸ ՉԴԱՌՆԱՆ

Լաւ ծնողը ըլլալ չի նշանակեր զոյգի կեանքը զոնել զաւակներուն համար: Օրուան ընթացքին ծնողները բաւարար կը զբաղին իրենց երեխաներուն կրթական, առողջական, դաստիարակչական եւ այլ հարցերով, սակայն օրուան ընթացքին պէտք է ըլլան նաեւ պահեր, երբ զոյգերը իրենց կեանքը պէտք է ապրին: Արդարեւ, երջանիկ ըլլալու համար երեխաները պէտք ունին զգալու, որ իրենց ծնողները ուրախ են եւ համեմաշխ ու երջանիկ զոյգ մը կազմած են:

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ԵՒ ԿԱՐՃԱՏԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Գործի բերմամբ կամ արձակուրդի նպատակով զոյգերու միջեւ կարճատեւ բաժանումները կ'ամրապնդեն զոյգերուն կապերը: Կարգ մը զոյգեր իրենց գոյատեւումը կը վերագրեն երբեմնի բաժանումներուն:

ԸՆԴՈՒՆԻՒ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԱՐՏԱԴՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տարիներուն հետ սերը կը փոխուի, անշուշտ ոչ թէ կը տկարանայ, բայց առաջին օրերու կիողք չի մնար: Խենթ սերը կը վերածուի հասուն, մնայուն եւ իմաստուն սիրոյ...

Յետեւաբար գիրար չմեղադրել ըսելով, որ «առաջւան պէս չես սիրեր զիս». պէտք է ձերբազատիլ այդ խաբկանքէն եւ դիմացինին մօտ փնտռել աւելի հաւասարակշռուած, բայց նաեւ աւելի հաստատուն սերը:

ԱՆՈՒՇԱՀՈՏ՝ ԱՅՈՒ, ԲԱՅՑ ԶԳՈՒՇԱՅԷՔ ԶԱՓԱԶԱՆՅՈՒԹԵՆԷ

Անուշահոտ կր գործածենք մենք մեզի, բայց նաեւ մեր շուրջիններուն համար: Հետեւաբար ջանանք ճիշդ չափն ու քանակը գտնել եւ մեր շրջապատը չանհանգստացնել:



ԵԹԷ ՇԱՐԺՈՒՆ ԷՔ ԵՆ ՇԱՍ

ԿՐ ՔՐՏՆԻՔ...

Ընկճուածութեան պարագային, նաեւ եթէ տեւաբար շարժուածի մէջ էք, քրտինքը կը փոխէ կարգ մը անուշահոտերու բոլորը. Հետեւաբար խուսափելը օտար բուսական փառֆլօրով ծածկել մեր մարմնին անախորժ հոտերը: Թելաղրելի է օտար բույրը, որ անշուշտ երբեք յագանքը չի փոխարիներ... Գիտնանք նաեւ, որ իւրոտ մորթերուն վրայ անուշահոտերը շուտ կը փոխեն իրենց բոլորը:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷԶ...

Ճափոնի մէջ հագուող չափերն անուշահոտ կը գործածեն, որպէսզի շուրջին-

ները չանհանգստացրնեն:

Հետեւաբար ցերեկը, գործի մէջ գգուելու ջանանք «ճանր» հոտերի եւ կամ բաւարարւելիք շատ քիչ քանակով:

Խաթէ Լոտի հետեւեալը կ'առաջարկէ. նախ անուշահոտ օդին մէջ «փչել», ապա այդ փչուած անուշահոտին տակ կենայ եւ բաւարարուիլ ձեզի հասած քանակով...

Կրթեալ գրուինաեւ հագուստներուն ներքին ծալքերուն վրայ անուշահոտ սրսկել եւ ոչ թէ մարմնին:

ԳԻՇԵՐՆԵՐԸ ԸՆՏՐԵՆ

ՄԵԿՄ ԲՈՅՐԵՐԸ

Երեկոյեան կարելի է օտար բուսական փոխարինել փառֆլօրով. բայց այս պարագային եւս պէտք է գործածենք քիչ քանակութեամբ, շուրջինները չանհանգստացնելու եւ մանաւանդ իրենցիկ սեղանին շուրջ անոնց անախորժ կը չկտրելու համար...

ՀԻՆԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՆ ՓԼԻՏԵՆԵՐԸ

Երեխայեղած ո՞ր տան մէջ փոխէ չկայ: Կարգ մը փոխէներ խնամքով կը պահենք, քանի որ անոնք մեզի սիրելի անձերու յիշատակներ կը համարենք. մինչ ուրիշներ այնքան մը հիմքած կ'ըլլան, որ կ'ուզենք ձերբազատիլ անոնցմէ:

Եթէ հին փոխէներ ու-

այլ մկրատով մը քակեցէք անոնց յատակի վրայ գտնուող կարերը, պարպեցէք մէջի բամպակը, աւագ կամ շատ մանր խճաքար լեցուցէք մէջը եւ կրկին կարեցէք:

Ծաւրացած այս փոխէներ կրնաք գետնէ վրայ անոնցմէ որպէսզի



ՆԱԾԱԳԻՐ

ՍՈՒՒ ԼԻՅՔ



Պատրաստութեան համար անհրաժեշտ են.

- 4 խոշոր սոխ
- 20 կրամ կարագ
- 100 կրամ բրինձ
- 200 կրամ թարմ սունկ
- 100 կրամ կարիդոս
- 100 կրամ «տաշուած» կրիւլէր պանիր
- 2 լոլիկ
- Ապուրի դգալ մը ծիթաւոլ
- Աղ, սեւ պղպեղ

Պատրաստութեան կերպը.-

Բրինձը խաշել աղի ջուրի մէջ, ապա քամոցէ անցընել եւ մէկ կողմ դնել: Սոխերուն գլուխները կտրել, միջուկը պարպել եւ մանրել ու մէկ կողմ դնել: Սունկերը լուլ, մաքրել եւ մանրել, նոյնպէս ալ կարիդոսը: Կարագը հալեցնել տապակի մը մէջ, աւելցնել մանրըւած սոխը, սունկն ու կարիդոսը: Ապա կրակին վրայէն հանել եւ խառնուրդին աւելցնել խաշած բրինձը, տաշուած պանիրը, աղն ու պղպեղը:

Սոխերուն մէջ լեցնել այս միջոցին, ապա փսխի մը մէջ շարել գտնոնք եւ 20 վայրկեան եփել փուռին մէջ: Լոլիկները եռացած ջուրի մէջ դնել, ապա կեղուել ու մանրել գտնոնք: Տապակի մը մէջ ծիթաւոլը տաքցնել եւ լոլիկները վրան թափել ու 10 վայրկեան եփել, ապա աղել, համեմել: Հրամցնելու ժամանակ սոխերուն կողքին հրամցնել լոլիկի այս թացանը: Բարի ախորժակ:

ԳԵՂԱՐՈՅՍԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ

Բոլորը այսօր մեծ եկամտերու իր յառաջացում ցած են աշխարհի զանազան երկրներու մէջ. յատկապէս՝ եւրոպայի եւ Ամերիկայի մէջ՝ ուր կայ զանազան առկայի հաստատ վերադարձ մը դեպի բնութիւնը, բնականը, բլրային բոյսերու, բլրային անկողնակներու մարզէն ներս:

Բնական ձեռքով պատրաստուած դեղերը չեն կտաւորուի իր բոյսերուն, քան զիսկին, որ այդ բնական ձեռքով պատրաստուած դեղերը խիստ ազդեցիկ են եւ սուր ազդեցութիւն ունենան արագ անհետանալու համար այ՝ անփոխարինելի: Սակայն այդ բնական ազդեցիկ դեղերը ունեն իրենց անբաժանելի եւսնաւորները, ու բժիշկը գոյաշուքեան կը երաւիրէ իր եկամտը դեղին գործածութեան բնագոյնին: Բուժումի խրախուսելը եղանակ ունի իր առաւելութիւնն ու բերութիւնը, եւ մարդիկ կը գիտեն ամէն միջոցի, որպէսզի հասնուան:

Դեղերը կարելի է բաժնել երկու խումբերու.

Ա. — Հիւանդութիւնը անմիջականօրէն բուժող դեղերը, որոնք ազդեցիկ են եւ արագ արդիւնք կու տան:

Բ. — Առողջութիւնը պահող՝ բուժական աշխարհի դեղաբոյսերը, որոնք կը բուժեն աւելի խորաբախանց ձեռքով զանազան բնական անհետող կողմնակի ազդեցութիւններու, մանաւանդ երբ սխալ գործածուի առաւելութիւնը (Էրոնի) անհասկացաւորութիւններու պարագային: Այսօրուան էջով նախնաւոր այդ դեղաբոյսերն մէկ բանին:

ԲԵՐԵՐԻՄԱ (ՀԵՂԱԿԱՆ ԲԱՇԽԱԾ)

Քիւրքի մային արմատը կ'օգտագործուի: Այս բոյսը ամբողջ Ասիայ մէջ մշակուած է շատ երկրամասերէն ի վեր: Ձմրան կը բաղն արմատը, կը չորցնեն, յետոյ կը կտրեն մանր չափերու կամ կը փոշիացնեն: Դեղին փոշին կ'օգտագործուի երկրակներուն Էարքիի պատրաստութեան մէջ ու կը համեմէ: Ասիայ ժողովուրդներուն նաշիրը: Գիրքի մային փոշին խոշակաւոր է ակտիւմէր սրող իր յատկութեամբ: Զինացի կը գործածուի զայն որովայնի ցանկերուն եւ լեղապարկի լեցումին դէմ: Վերջերս յայտնուեցաւ նաեւ անոր հակաօքսիտացումի յատկութիւնը, ուրեմն նաեւ պաշտպանող եւ կազդուող է:

Այս բոյսը կը գտնուի նաեւ դեղատառի ձեռքին տակ:

ՃԻՆՍԵԼԿ (ԱՐԱՆԵԼԻ ԿԵԱՆՔԻ ԱՐՄԱՏԸ)

Կ'օգտագործուի երկնակներուն արմատը: Հագարաւոր աւորներէ մեզի հասած այս բոյսը, որ առաւելու կը գործածուի Զինատառի եւ Գորքի մէջ, իր արմատին շնորհիւ փերակոչուած է Հիւսկի մաղիկը: Եւ արմատացած՝ գիտնականներու ուշադրութեան: Արմատին մէջ գտնուող արմատը բանակը կտրուի գոյնը 8 առ 10 կարգի պէտք է ըլլայ բարձրագոյն ազդեցութիւն ապաւ համար: Բոյսին երեքմէն տեսակին մէջ է, որ կը գտնուի երկնակներուն ամէնէն բարձր բանակը:

Արմատին մէջ երկնակներէն, գտնուող կը կտրուի ձեռքով, որպէսզի կտրուի իր երկնակներէն:

Զինակներէն կտրուի ու ձեռքով կտրուի իր երկնակներէն: Ան կը բարձրացնէ փերակներն եւ մային կարողութիւնը, մարմնը կը առկայ աշխատանքի մանրութեան, յոգնութեան գոյացումը կը կտրուի, կը կտրուի նաեւ մը կտրուի գոյացումը:

Ուսումնասիրութիւններ փառած են, քէ երկնակներ կը կտրուի, Բոյսերու, բոյսիկներէն եւ շաւրի կտրուի արեւին մէջ:

ԷՐԵԼԱՍԷ (ԿԱՐՄԱՐԱԹԱԳ)

Դարձեալ արմատն է, որ կ'օգտագործուի: Հանցումն է Հիւսիսային Ամերիկայի մէջ. կարմրաբաղր բաւական ուսումնասիրուած ու առաւելու գործածուող բոյս մըն է Գորքի մէջ: Այն անձերը, որոնք կ'օգտագործուի անհագրաւ կամ անհագրաւութիւն ունեցած են (կարբոնի, ապալիւն, ժանրերու), մեծապէս օգտուած են այս բոյսին գործածութեան: Ան ունի կտրուիկի, կտրուիկի կտրուի մարմնակներէն պատրաստուած կամ բնական պաշտպանութիւնը բարձրագոյն յատկութիւններ: Ուրեմն կարմրաբաղր պէտք է գործածել որպէս կտրուիկի մէջ ձեռքին սկիզբը բարձրութեան, գործող պահու համար արմատը:

ԷՐԵԼԱՍԷ (ԿԱՐՄԱՐԱԹԱԳ)

Կ'օգտագործուի Էօֆիփիփիսին տերեւները: Անկողն դեղատառի ձեռքին տակ այն երկնակներուն է: Դեղին մէջ ձեռքով կտրուի, որ կը բուսնի Աստուրիայ մէջ: Անոր սուր, երկար ու բարձր մնալու տերեւները կտրուի են երկնակներով, յատկապէս Հիւսիսային Էօֆիփիփիսին, որ ունի յատուկ ազդեցութիւն մը խոլերէնը վրայ (expectorant), կը արթնացուի, այսինքն կը կտրուի շնչափողին արտադրուող խոլը եւ կը կտրուի անոր արտադրութիւնը:

Էօֆիփիփիսին ունի նաեւ կտրուիկի ազդեցութիւն եւ օգտակար է խոշափողի եւ բոլորէն գրգռումներուն դէմ: Այս բոյսին առաւելութիւնը կտրուի կ'արտադրուի բոլորէն կտրուի, ինչ որ բոյս կու տայ բոյսին յոյսերէն ազդեցութիւնը, գլխաւորաբար շնչափողին գործարաններուն վրայ: Ուրեմն Էօֆիփիփիսին բնական է կտրուի, բոլորէն սուր կամ անհագրաւութիւն պարագաներուն, ինչպէս նաեւ մային գտնուած թարմութիւնը բարձրութեան եւ արգանքի վրայ կարծրացում պարագաներուն: Տրուած ըլլալով, որ Էօֆիփիփիսին երեքաւորը գլխաւոր է եւ արագօրէն ցնդող, անհագրաւ եւ տերեւներուն չորացումը՝ ցուրտ եւ ցած ջերմաստիւնի միջոցով, որպէսզի բոյսը չկտրուի իր ազդեցութիւնը: Դեղին փոշին կ'օգտագործուի մաս կը կտրուի, արմատը տեսակի պատրաստութիւններուն, ինչպէս՝ լուծուող, շարժի, ձեռքով շաւր, մոմիկ եւ այլն...



հոսանքէն կամ հոգէն դուրս ամուր չփակուի:

ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՐԻ ՊԱՐԱՊ ԶԻՇԵՐԸ

Հանքային ջուրի պարագային (ոչ կլոր, այլ քառակուսի ձեռք) այսուհետեւ մի՞ թափէք: Անոնց գոլուները կանոնաւոր կտրեցէք. ապա իւրաքանչիւրը սփռէ՛ք Զոյգ խմեցէք ու իրարու միացուցէք: Յետոյ գանոնք օգտագործեցէք ձեր գործիքները դաստորոշու կամ մատիտները շարելու եւ թերթերը տեղադրելու համար:

Այս էջը դադարաւոր ԸՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳԱՆԵԱՆ



ՄԱՐՍԵՅԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԸ
ԽՈՇՏԱՆԳԱԾ ԵՆ ԱՆԳԼԻԱՅԻ
ԻՐԵՆՑ ՀԻՒՐԵՐԸ

«Զեմփիլընդ Լիկ»ի Մարսէյ - Ջեյսի ճակատումի աւարտին, «Վելոտրոմ» դաշտին շրջակայքը վերած-ւեցաւ պատերազմի դաշտի...

Ճրանսացի համակիրները խոշտանգած են անգլիացի համակիրները, իսկ Մարսէյի ամէնէն «խենթ» փա-դանդին՝ «Իւլթրա»ի յատկացուած բրյուլլիններէն շի-շեր եւ պայթուցիկ հրթիռներ տեղացին անգլիացիներուն գլխուն: Հակառակ անոր, որ Մարսէյ յաղթեց, սակայն անոր համակիրները մնացին միեւնոյն խուլի-կանները: Պատկերացնելը դժուար է, որ եթէ Մարսէյ պարտուէր ի՞նչ կրնար պատահիլ...

Անգլիացի համակիրներէն շատեր վիրաւորուած են եւ եթէ չսպառնալու ռեֆերի օգնութեան չփութա-յին, արդէն իսկ քառսային վիճակը կրնար շատ աւելի բարդանալ:

Եւսէ - ԷՖՖ. Ան այժմ քննութիւն րացած է հարցին շուրջ եւ այս գծով անկա իր յաջորդ նիստին (17 Մարտ) կու տայ որոշումը:

Ճրանսական ոստիկանութիւնը թէ՛ եւ կը դատապար-տէ արարքը, սակայն կը հաստատէ, որ առաջին միջա-դէպին գլխաւոր պատճառը հարրած անգլիացիները եղած են:

ՄԱՐԶԻՉՆԵՐՈՒ ԱՌՕՐԵԱՅԷՆ

●Պելճիքացի վեթերան միջնապահ Էնգօ Շիֆօ յառա-ջիկայ եղանակին շատ հաւանարար նշանակուի Շարյ-րուալի մարզիչ, յայտնեցին այս վերջինին պատասխա-նատուները, երէկ, աւելցնելով, որ անոր առաջարկած են նաեւ առժամարար ստանձնել օգնական մարզիչի պաշտօնը, նկատի ունենալով, որ Շարյրուա կը պայքա-րի Ա. դասակարգ մնալու համար:

Յարդ 24 մրցումէ միայն Հինգ յաղթանակ արձա-նագրած Շարյրուա կը «գրաւ» ընդհանուր դասաւոր-ման 15րդ վտանգաւոր դիրքը (18 խուճրերուն մէջ):

Պելճիքացի ֆուլթպոյի ֆետերասիոնին համար Շարյ-րուալի դաշտը կը նկատուի կարեւոր, նկատի ունենա-լով, որ Եւրօ-2000ի մրցաշարքին անոր վրայ տեղի պիտի ունենան երեք մրցումներ, որոնցմէ կարեւորագոյնը՝ Անգլիա - Գերմանիա ճակատումը, որ տեղի պիտի ունե-նայ յառաջիկայ Յունիս 17ին:

Շարյրուալի պատասխանատուներուն կարծիքով, 33 տարեկան Շիֆոյի ներկայութեան խուճրը որոշ յառաջ-դիմութիւն կրնայ արձանագրել եւ ակումբին համա-կիրներուն թիւը վերստին կրնայ յարձրանալ:

Շիֆօ, որ այժմ մաս կը կազմէ պարագլխի դիրքը գրաւող Անտորլէթի, շատ փոչ առիթներով երեւցաւ այս տարի դաշտերուն վրայ:

●ԻՐԱՆԻ ֆուլթպոյի ազգային խումբին նախկին մար-զիչը՝ Ժայալ Թայեպի վերստին նշանակուեցաւ մարզիչ, փոխարինելով Մանսուր Փուրհետարին, յայտնեց Իրա-նի ֆուլթպոյի ֆետերասիոնը:

Փուրհետարի շարժանակիւրդին պաշտօնագրուեցաւ ֆետերասիոնին կողմէ, որովհետեւ անցեալ շարժ, առանց ֆետերասիոնին արտօնութեան իսթիքալ ակումբին մարզիչի պաշտօնը ստանձնած էր:

«Ազգային խումբին մարզիչ մը չի կրնար միաժամա-նակ ակումբի մըն ալ մարզիչը ըլլալ: Անոր պաշտօ-նագրուումը ճիշդ է, մանաւանդ, որ ան առանց մեր արտօնութեան առած է այդ սխալ քայլը», յայտնեց ֆե-տերասիոնին մէկ պատասխանատունը:

1998ի Մոնտիալին, Թայեպի Իրանի ֆուլթպոյի ազ-գային խումբին հետ յաջողած էր պարտութեան մատնել Միացեալ Նահանգներու ազգային խումբը (2-1), սա-կայն մնացեալ երկու մրցումներուն պարտութիւն կրե-լով Եոկոսոյալեիայէն (1-0) եւ Գերմանիայէն (2-0) դուրս մնացած էր մրցաշարքէն:

Մոնտիալէն ետք, սակայն, ան ներկայացուցած էր իր հրաժարականը, ճընտանեկան պատճառներով:

●ՊՐԱՋԻԼԻ ֆուլթպոյի ազգային խումբին նախկին խմբապետը՝ Քարլոս Ալպերթօ Թորէս, երէկ նշանակ-ւեցաւ Օմանի ֆուլթպոյի ազգային խումբին մարզիչ, յայտնեց Օմանի ֆուլթպոյի ֆետերասիոնը:

Ֆետերասիոնին մէկ պատասխանատուն յայտնեց, թէ յառաջիկայ Մարտ 10ին ան պիտի ստանձնէ իր պաշտօ-նը, որպէսզի ազգային խումբին հետ սկսի իր աշխա-տանքը, 2002ի Մոնտիալին գտումի մրցումներուն պատ-րաստուելու համար: Ըստ ֆետերասիոնին, ան մէկ տար-ւան պայմանագրութիւն մը ստորագրած է:

«Ան մեծ անուն ձգած է ֆուլթպոյի աշխարհին մէջ եւ իր կողքին ունենալով ֓ելէն, շահած է Մեքսիքայի մէջ տեղի ունեցած 1970ի Մոնտիալը», կը յայտնէ Օմանի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Ֆահսէ Ի Ռայ-սին՝ իր համակիրներուն:

Քարլոս Ալպերթօ, որ նախքան իր նոր պաշտօնը ստանձնելը Պրաֆոնոյի (Պրագի) մարզիչն էր, գտու-մի մրցումներուն (Ասիա, Ա. խմբակ) իր խմբակին մէջ մրցակից պիտի ունենայ Սուրիան, Լատսր եւ Ֆիլիփեան-ները:

«ԶԵՄՓԻԼՆԵՉ ԼԻԿ»
ՖԻՈՐԵՆԹԻՆԱ, ՊԱՐՍԵԼՈՆԱ
ԵՒ ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆԱՅԹԵՑ ՅԱՂԹԵՅԻՆ

«Զեմփիլընդ Լիկ»ի չորս ճակատումներ կատարուեցան երէկ, որոնց ընթացքին Ֆիո-րենթինա, Պարսելոնա եւ Մանչեսթըր Եունայ-թըտ յաղթանակներ արձանագրեցին, մինչ Հերթա Պերլին - Սփար-թա Փրակա ճակատու-մը աւարտեցաւ 1-1 հա-ւասարութեամբ:

Ֆիորենթինա իր դաշտին վրայ 1-0 ար-դիւնքով պարտութեան մատնեց Սպանիոյ Վա-լենսիան եւ Բ. խմբա-կին դասաւորման մէջ պահեց պարագլխի դիրքը: Մրցումին «որք» կոլը նշանակեց Փրետ-րակ Միաթովիչ, 20րդ վայրկեանին, փե-նալթով:

Ներկայ էին 30 հա-պար համակիրներ:

Բ. խմբակի երկրորդ մրցումը, որ տեղի ու-նեցաւ Մանչեսթըրի մէջ 45 վայրկեան ուշա-ցումով (դաշտին մայր ճամբուն վրայ պատա-հած մեծ արկածի մը պատճառով), աւարտե-ցաւ տեղւոյն Եունայթը-տի յաղթանակով՝ 2-0 արդիւնքով, Պորտոյի դէմ: Անգլիական կապ-ւմին կոլերը նշանակե-ցին Ռայլը Կիկլ եւ Թե-

տի Շերինկհամ: Մրցու-մը եղաւ միջակ մակար-դակի: Ներկայ էին 60 հապար համակիրներ:

Ա. խմբակին մէջ, Հերթա Պերլին - Սփար-թա Փրակա հանդիպու-մին (1-1) ներկայ էին 30 հապար համակիրներ: Գերմանական կապմին կոլը նշանակեց Սիքս-թըն Վէյթ, իսկ չեխա-կան խումբին կոլը՝ Հորսթ Սիկլը:

Ա. խմբակին միւս

Ստորեւ՝ խմբակներուն դասաւորումը.

Ա. խմբակ	ԿէՏ
1. Պարսելոնա	7
2. Փորթօ	6
3. Հերթա Պերլին	2
4. Սփարթա Փրակա	1

Բ. խմբակ	ԿէՏ
1. Ֆիորենթինա	7
2. Մանչեսթըր Եունայթըտ	6
3. Վալենսիա	3
4. Պորտօ	1

Գ. խմբակ	ԿէՏ
1. Պայէրճ Միւհիս	7
2. Ռէալ Մատրիտ	6
3. Տիճամօ Զիւ	3
4. Ռոզընպորկ	1

Դ. խմբակ	ԿէՏ
1. Ֆէյէնուրտ	6
2. Չելսի	4
3. Լացիօ	4
4. Մարսէյ	3

ԼՈՒՐԵՐ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԷՆ

●ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆԻ պատասխանատուները յայտնեցին, որ Կի-րակի օր վենեցիայի դէմ մրցումին վիրա-ւորուած Քրիսթիան Վիերի առնուպն եր-կու շաբաթ պիտի բա-ցակայի դաշտերէն:

Վիերիի վիրաւոր-ւիլը մեծ մտահոգու-թիւն կը պատճառէ ակումբին պատասխա-նատուներուն, որով-հետեւ երկու կարեւոր մրցումներու ան պիտի չկարենայ դաշտ ներ-կայանալ: Առաջինը՝ յառաջիկայ Կիրակի օր, Ա. Սէ. Միլանի դէմ տերալիին, իսկ երկրոր-դը՝ շաբաթ մը ետք, անոր նախկին ակումբին՝ Լացիօ Ռոմայի դէմ:

Այն մտավախու-թիւնը կայ, որ ան եր-րորդ մրցումին ալ չկա-րենայ դաշտ ներկայա-նալ: Մարզիչ Մարսելօ Լիփի, որուն կապմը այժմ կը գրաւէ ընդհա-նուր դասաւորման չորրորդ դիրքը, մտա-հոգ է, մանաւանդ, որ իր խումբը եօթը կէտով ետ կը մնայ պարագլու-խի դիրքը գրաւող Եու-կենթինսէն:

Այսպիսով, Վիերիի եւ պրպիլցի Ռոմայ-տոյի փոխանցման հա-մար 80 միլիոն տոլար վճարած Ինթեր, դաշտ պիտի ներկայանայ առանց անոնց: Ռոմայ-տօ տակաւին կը գտը-ւի Պրալիլ, ամբողջու-թեամբ ապաքինելու համար:

Այժմ, Լիփի իր յոյսե-րը պիտի դնէ Ալվարօ Ռիքուպայի եւ իտալա-

ցի միջապային նախ-կին մարզիկ Ռուպերթօ Պաճիոյի վրայ:

●ՎԻԹԵՍ ԱՌՆՇԷՄԻ յառաջապահ Փիեռ Վան Հոյտոնը Հոլան-տայի ֆուլթպոյի ֆետե-րասիոնին կողմէ չորս մրցումով կախակա-ւեցաւ, երկու տարբեր առիթներով մրցակից պարտութեան մարզիկներուն հար-ւածած ըլլալուն հա-մար:

Այդ երկու դէպքերը պատահած էին անց-եալ Փետրուար 16ին, Հոլանտայի ֆուլթպոյի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն (Վալվի-քի դէմ): Թէեւ օրուան իրաւարարը չէր տե-ւած պատահարները, սակայն ֆետերասիո-նը այս որոշումին յան-գածէր, դիտելէ ետք մըր-ցումին վիտէ - երկը:

Վիթէի պատասխա-նատուները յայտնե-ցին, թէ պիտի չըողո-քեն, ոչ ալ պիտի փոք-ձեն դատ բանալ այս գծով, որովհետեւ Սել-թիքի եւ Նոթինկհամ Ֆորէսթի նախկին մարզիկը արդէն իսկ վիրաւոր է եւ շուրջ մէկ ամիս պիտի բացակա-յի դաշտերէն:

Հոլանտայի ֆուլթպո-լի ապալանի խումբին յառաջապահ Հոյտոն-քի ակումբը կը նկատ-ւի բաժակին գլխաւոր թեկնածուն. նկատի ու-նենալով, որ վորստը խումբը՝ Փ. Ս. Վ. Այնտ-հովըն, Ալաքս Ամսթը-րամ եւ Ֆէյենուրտ Ռո-թերտամ դուրս մնա-

նակատումին, Պարսե-լոնա 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Փորթոն: «Նուքամփ»ի մէջ կայացած այս մըր-ցումին ներկայ էին 68 հապար համակիրներ: Մարիօ Ժարտել նշա-նակեց փորթուգալա-կան կապմին երկու կո-լերը, մինչ սպանական խումբին կոլերը նշա-նակեցին Ռիվալտօ (2 կոլ), Յրանք Տը Պոեթ եւ Փաթրիք Զուիվըրթ:

ՊԱՍՔԵԹՊՈԼ. ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅԲԸՐԶ ՎԵՐԱԳՐԱԻԵՅ
ԽԱՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻԻ
ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԸ

ԷՆ. ՊԻ. Էյի երէկուան մրցումներուն, ամէնէն աւե-լի սպասուած հանդիպումը՝ Փորթլէնտ Թրէյլ Պիշ-յորդ - Լոս Անճելըս Լէյքըրզ վերջ գտաւ Լէյքըրզի յաղթանակով՝ 90-87:

Փորթլէնտ, որ Ատլանտեան Գօտիի դասաւորման պա-րագլուխի դիրքը կը գրաւէր եւ զահրէկէց ըրած էր այդ դիրքէն Լէյքըրզը, իր իսկ դաշտին վրայ կրած այս պար-տութենէն ետք առաջին դիրքը դարձեալ զիջեցաւ Լէյ-քըրզի:

Շաքլի Օնլի նշանակեց 23 կէտ եւ 10 ռիպաւնտ, մինչ Քուպր Պրայընթ՝ 22 կէտ: Փորթլէնտի լաւագոյն տարրե-րը եղան Սքոթի Փիփըն եւ Արեխաս Սապոնիս:

Մայեմի Հիթ, Ատլանտեան Գօտիի առաջինը, պար-տութիւն մը կրեց Սան Անթոնիոյի մէջ, տեղւոյն Սփոր-գէն՝ 93-89 արդիւնքով: Սփըրզ կը գրաւէ Միջարեւմտե-եան Գօտիի պարագլուխի դիրքը:

Տէյլփտ Ռոպինսոն դարձեալ եղաւ իր կազմին լաւա-գոյնը (19 կէտ), մինչ անոր երկու խմբակիցները, եր կուքն ալ բանալի տարրեր՝ Թիմ Տանքըն եւ Թեքի Փոր-թրըր բացակայ էին (վիրաւոր): Հիթէն եւս կարեւոր մար-զիկ մը՝ Ալոնզօ Մորնինկ կը բացակայէր (վիրաւոր):

Ինտիանա Փէյլըրզ - Տիթթոյիթ Փիսթրնզ ճակատու-մը եղաւ շատ տաք եւ աւարտեցաւ բարձր արդիւնքով՝ 115-105: Յաղթական Փէյլըրզի աստղը եղաւ Ռեճի Միլ-լըր (23 կէտ), սակայն մրցումին լաւագոյն մարզիկը հանդիսացած Հորաս Կրանթ, որ նշանակեց 37 կէտ, սակայն բաւարար չեղաւ որ անոր խումբը յաղթական վերադառնայ Ինտիանայէն: Փէյլըրզի յաջորդական 23րդ յաղթանակն էր իր դաշտին վրայ:

Կեդրոնական Գօտիին մէջ Թորոնթօ Ռեփթըրզ յաղ-թանակ մը եւս տարաւ, այս անգամ Շիքսօ Պուլզի դէմ, 87-80 արդիւնքով: Պուլզ կը մնայ իր Գօտիին (Կեդ-րոնական) վերջինը, մինչ Թորոնթօ կը գրաւէ երրորդ դիրքը եւ կրնայ նաեւ բարձրանալ երկրորդ դիրք:

Վինս Քարթըր, որ առջի օր 51 կէտ նշանակած էր, երէկ նշանակեց 26 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները. Ինտիանա Փէյլըրզ - Տիթթոյիթ Փիսթրնզ 115-105
Ֆիլադելֆիա Սիթլըրզ - Տալաս Մալթրիքս 106-87
Թորոնթօ Ռեփթըրզ - Շիքսօ Պուլզ 87-80
Ֆեօնիքս Սանգ - Քլիվլենտ Քալալիք 100-93
Սլաքսօ Մեքիք - Սիէթլ Սուփըրսոնիքս 103-94
Չարլթ Հորնէթզ - Միլենետօք Վուլվզ 92-87
Սան Անթոնիօ Սփըրզ - Մայեմի Հիթ 93-69
Լ. Ա. Լէյքըրզ - Փորթլէնտ Թրէյլ Պիշլըրզ 90-87
Սաքրամենթօ Քլինկզ - Վանքուվըր Կրիլլիք 112-87

ՌԻՊԷԶ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ

Մինչ Գերմանիոյ ֆուլթպոյի ազգային խումբին մար-զիչին՝ Էրիչ Ռիպէլի դէմ դժգոհութեան ալիքը կը սաստ-կանայ եւ անոր դէմ արտայայտուող անձնաւորութեանց թիւը կը բարձրանալու, գերմանական ֆուլթպոյի վեր-ջին աստղերէն Լոթար Մաթլուս կը դիմէ հակառակ թէյզին՝ Ռիպէլի պաշտպանութեան: Ան կ'ըսէ, որ մար-զիչը «կորսուած» է եւ օգնութեան կարիք ունի: 39 տարեկան Մաթլուս, որ անցեալ շաբաթ մրցանիչ մը հաստատեց 144րդ անգամ ըլլալով ազգային խումբին շապիկը կրելով, իր յայտարարութիւնը կատարեց հրա-պարակաւ, «Պիլտ» օրաթերթին մէջ հարցազրոյցի մը ընթացքին:

Ըստ Մաթլուսի, մարզիչը պէտք է մնայ իր պաշտօ-նին վրայ եւ անոր կողքին 3 հոգիոնց յանձնախումբ մը պէտք է գործէ, կազմուած՝ փորձառու նախկին մար-զիկներէ:

Մաթլուս եղաւ միակը ցարդ, որ կը պաշտպանէ Ռի-պէլը, մինչ ժողովրդային մակարդակի վրայ մարզիչին վարկը կը գտնուի գերոյի սահմաններուն:

Գերմանական ֆուլթպոյը երկար առնել ի վեր կ'ապ-րի ծանր օրեր եւ մասնագէտներու կարծիքով, այս ըն-թացքին գլխաւոր պատասխանատուն երկրին ֆետե-րասիոնն է:

Կատարուած հարցախոյզի մը արդիւնքներուն հա-մաձայն, գերմանացի ժողովուրդին եօթանասուն տո-կոսը կը հաւատայ, որ կացութիւնը կրնայ բարելաւ-ւիլ, եթէ երկրին ամբողջ ֆուլթպոյը ձեռք առնէ «Քալ-լըր» ձրանց Պեքենպաուրը եւ անոր սերունդը:

ԲՈՆԿ ՖՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ԲԱԺԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Անցեալ Կիրակի օր, «Ափօր» դպրոցին մէջ տեղի ունեցաւ Քոնկ Ֆուի Լիրանանի բաժակի ախոյեանու-թիւնը, մասնակցութեամբ Լիրանանի բոլոր ակումբնե-րուն, կազմակերպութեամբ Լիրանանի Քոնկ Ֆուի ֆե-տերասիոնին:

«Կամք» իր մասնակցութիւնը բերաւ 4 մարզիկներով եւ շահեցաւ 3 մետալներ (18 տարեկան եւ վեր): Շանթ Տօնապետեան (85-70 քկ. կշիռ) ոսկի մետալ, Մուաթի Միսիրեան (85-90 քկ.) կշիռ ոսկի մետալ եւ Լեւոն Գէորգեան (70-75 քկ.) կշիռ պրոնզ մետալ:

Մրցումներուն կեդրոնի իրաւաբարն էր (ֆետերէ) Բաֆֆի Սեւեան:

ԱՅՑԵԼԵՑԷ ԸԱՅ ԴԱՏԻ
ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏԱՂԱԲԱՐԸ
ԱՌԱՌՕՏԵԱՆ ԺԱՄԸ 11Է ՄՈՆՉԵ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 9, ՄԱՐ ԷԼԻԱՍ ԵԿԵՂԵՅԻ ՄՈՒՇ, ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՐԱՊԱՐԱԿ

